

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/3

26 հունվարի 2016 թ.

Քննարկվեց «Թի ընդ Ջի Գրուպ» ՍՊԸ 19.12.2015թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 17.11.2015 թ-ի թիվ 6115436 ակտի դեմ:

«Թի ընդ Ջի Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 17.11.2015 թ-ի թիվ 6115436 ակտը կազմվել է օրենքի պահանջների խախտումներով, այն հիմնավորված չէ, «Թի ընդ Ջի Գրուպ» ՍՊԸ կողմից չի կատարվել ակտում նկարագրված խախտումը: Այս ամենի արդյունքում կազմվել է ակնհայտ ոչ իրավաչափ վարչական ակտ:

Այսպես, իրականացվող ստուգման գործընթացը փաստացի սկսվել է դեռևս 21.10.2015թ.-ին՝ ստուգման հանձնարարականի տրման օրը, իսկ հանձնարարագրին ընկերության տնօրենը ծանոթացվել է 29.10.2015թ.-ին:

Նույն օրը՝ 29.10.2015թ., ընկերության տարածքում տնօրենը հանդիպել է ստուգում իրականացնող տեսուչներին /վերջիններիս հրավերով/, որոնք հայտնել են, որ ընկերությունում իրականացվել են հսկիչ գնումներ, կատարված գնումների արդյունքում ՀԴՄ կտրոնները մշտապես տպվել են և, որ ընկերությունում խախտումներ չեն արձանագրվել: Այնուհետև, ծանոթացրել են ստուգման հանձնարարականին և հայտնել, որ առաջիկա օրերի ընթացքում ընկերությանն օրենքով սահմանված կարգով կտրամադրվի ստուգման արդյունքում կազմված տեղեկանք՝ խախտումներ չհայտնաբերվելու վերաբերյալ:

Ստուգման արդյունքում կազմվելիք տեղեկանքի վերաբերյալ որևէ տեղեկություն չունենալով, տնօրենը զանգահարել է ստուգող տեսուչներին: Արդյունքում, անակնկալ կերպով տեղեկացել է, որ որոշվել է ընկերության նկատմամբ կազմել ակտ:

Արդեն 09.11.15թ.-ին հանձնվել է վերը նշված վարչական ակտի նախագիծը: 14.11.15թ.-ին օրենքով սահմանված կարգով Կենտրոնի ՀՏ են ներկայացվել ընկերության առարկությունները վարչական ակտի նախագծի վերաբերյալ, որոնք սակայն անտեսվել են, իսկ վերջնական վարչական ակտում որևէ անդրադարձ ներկայացված առարկություններին չի եղել: Ավելին, խախտելով Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված իմպերատիվ նորմը ներկայացված առարկությունները չեն կցվել ստուգման թիվ 6115436 ակտին:

Ստուգող տեսուչների կողմից ստուգման գործընթացը սկսվել է դեռևս 21.10.15թ.-ին, իսկ առաջին հսկիչ գնումը փաստորեն կատարվել է 24.10.15թ.-ին, որի ընթացքում գնվել է ամերիկանո, ջուր և էսպրեսո, որի դիմաց տրվել է ՀԴՄ կտրոն: Հաջորդ գնումը կատարվել է 27.10.15թ.-ին՝ գնվել է ամերիկանո, ջուր և արոմատացված կապուչինո, իսկ վերջին գնումը՝ 29.10.15թ.-ին, գնվել է ամերիկանո, ջուր և արոմատացված կապուչինո:

Հսկիչ գնման այս բոլոր դեպքերում ընկերության աշխատակիցների կողմից օրենքով սահմանված կարգով տպվել և տրամադրվել է ՀԴՄ կտրոնները, որոնց վրա

առկա են եղել գնված ապրանքների անվանումների մասին տեղեկատվությունը: Ընդ որում, տրամադրվել են հենց այն ապրանքները, որոնց անվանումները տպվել են ՀԴՄ կտրոնում: Այսինքն, ՀԴՄ կտրոնի վրա տպվել են այն ապրանքների անվանումը, որոնք գնվել են տեսուչների կողմից:

Չնայած այս հանգամանքին ստուգող տեսուչների կողմից որոշվել է ընկերությանը վերագրել ՀՀ Կառավարության 2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջների խախտում, այն պարագայում, երբ ակտում բառացիորեն ամրագրված է, որ ընկերության գանձապահի կողմից գումարը մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է ՀԴՄ կտրոնը գնում կատարող անձանց: Նշվածից ակնհայտ է դառնում, որ ընկերության կողմից չի խախտվել նշված կարգի 17-րդ կետի որևէ պահանջ: Այսպես, գումարը սահմանված կարգով ստացվել է, մուտքագրվել է դրամարկղ և տպվել ՀԴՄ կտրոն, որում առկա են եղել գնված ապրանքների անվանումները, իսկ տվյալներն հարկային մարմին են ուղարկվում ավտոմատ կերպով՝ առանց գանձապահի կամ որևէ աշխատակցի միջամտության:

Ակտում ստուգող տեսուչների կողմից նշվել է, որ խախտվել են նաև ՀՀ Կառավարության թիվ 846-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, ըստ որի. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում... 5) ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրումը...»: Ակնհայտ է, որ այս նորմի խախտում ընկերության կողմից թույլ չի տրվել:

Բանն այն է, որ ստուգում իրականացնող տեսուչները հենց իրենք են նշել, որ գնել են ամերիկանո, արոմատացված կապուչինո և ջուր և, որ ՀԴՄ կտրոնին տպված են եղել հենց այդ անվանումները:

Խախտման հիմնավորման նպատակով ստուգող տեսուչների կողմից ստուգման ակտում նշվել է, թե ՀԴՄ կտրոնին տպված ապրանքների անվանումներից հնարավոր չէ պարզել, թե որ ապրանքատեսակին են պատկանում /ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.02.2013թ. թիվ 873-Ն հրամանով հաստատված արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի/ նշված անվանումները: Այս եզրահանգումը ևս մտացածին է: Բանն այն է, որ Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին ՀՀ օրենքով և/կամ վերջիննիս հետ փոխկապակցված որևէ այլ օրենսդրական և/կամ ենթաօրենսդրական ակտով սահմանված չէ և առկա չէ որևէ հղում ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից արձակված վերը նշված հրամանին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից արձակված այս հրամանի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ կազմակերպությունը չի հանդիսանում այս դասակարգչի կիրառողը: ՀԴՄ սարքերի կողմից տպվող կտրոնի վրա ապրանքների անվանումների արտացոլման միջոցով չէ որ հավաքագրվում է կամ կարող է հավաքագրվել վերը նշված բնույթի վիճակագրական տեղեկատվությունը: Ավելին՝ ՀԴՄ կտրոնները, որոնց վրա տպված է վաճառվող ապրանքի անվանումը, ենթակա են տրամադրման ընկերությունից գնում կատարող քաղաքացիներին, ովքեր ակնհայտորեն նման վիճակագրական տեղեկատվության հավաքագրողներ չեն: Բացի այդ, ակնհայտ է, որ օրենսդրական այս նորմի ներդրման նպատակն ամենևին վիճակագրական տեղեկատվության հավաքագրումը չէ, քանի որ բացի ամեն ինչից, համաձայն ՀՀ կառավարության որոշման ոչ բոլոր հարկատուներն ունեն օրենքով

սահմանված պարտավորություն ՀԴՄ կտրոնին տպելու վաճառվող ապրանքի անվանումը:

Վերոնշվածից բացի հատկանշական է, որ ստուգող տեսուչների կողմից չի արձանագրվել անգամ, թե հատկապես որ գնման դեպքում և գնված որ ապրանքի դեպքում է արձանագրվել ընկերությանը վերագրվող խախտումը: Այս հանգամանքից ակնհայտ է դառնում, որ արձանագրված խախտումը հասկանալի չէ անգամ ստուգող տեսուչների համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների դրույթներով ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 17.11.2015թ.-ի թիվ 6115436 ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 21.10.2015 թ-ի թիվ 6115436 հանձնարարագրի համաձայն «Թի ընդ Ջի Գրուպ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 17.11.2015 թ-ի թիվ 6115436 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Արմեն Ալախվերդյանի և ավագ հարկային տեսուչ Հրայր Ղալթախչյանի կողմից 29.10.2015 թ-ին ժամը 13:03-ին ք.Երևան, Թումանյան 6/6 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտից կատարվել է 2900 դրամի գնում՝ 1 հատ սուրճ ամերիկանո 1000 դրամ, 1 հատ սուրճ արոմատացված կապուչինո 1000 դրամ, 1 շիշ ջուր 400 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահի կողմից գումարը մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն, որի վրա տպագրված էր ամերիկանո 1 բաժին 1000 դրամ, արոմատացված կապուչինո 1 բաժին 1000 դրամ, ջուր 400 դրամ, որով հնարավոր չէ պարզել, թե նշված անվանումները որ ապրանքատեսակին են պատկանում ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ-ի թիվ 875-Ն հրամանով հաստատված արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջները: Նույն կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ՀԴՄ կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրումը 2015 թ-ի ապրիլի 1-ից 2013 թ-ի արդյունքներով 58.35 մլն դրամից մինչև 500.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում, որն առաջացնում է պատասխանատվություն: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ

օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտի 1-ին կետում նկարագրված խախտումն արձանագրվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

1. Նախ հարկ է նշել, որ Ակտի 1-ին կետի համաձայն 29.10.2015 թ-ին ժամը 13:03-ին ք.Երևան, Թումանյան 6/6 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտից կատարվել է 2900 դրամի գնում՝ 1 հատ սուրճ ամերիկանո 1000 դրամ, 1 հատ սուրճ արոմատացված կապուչինո 1000 դրամ, 1 շիշ ջուր 400 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով:

Տվյալ դեպքում, Ակտի 1-ին կետում սխալ է նշված գնված ապրանքների ընդհանուր արժեքը, այն է՝ 1 հատ սուրճ ամերիկանո 1000 դրամ, 1 հատ սուրճ արոմատացված կապուչինո 1000 դրամ և 1 շիշ ջուր 400 դրամ ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է ոչ թե 2900 դրամ, այլ 2400 դրամ:

2. Ակտի 1-ին կետում նշված է նաև, որ գնված ապրանքների դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնի վրա տպագրված էր ամերիկանո 1 բաժին 1000 դրամ, արոմատացված կապուչինո 1 բաժին 1000 դրամ, ջուր 400 դրամ, որով հնարավոր չէ պարզել, թե նշված անվանումները որ ապրանքատեսակին են պատկանում ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ-ի թիվ 875-Ն հրամանով հաստատված արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 24.12.2015 թ-ի թիվ 1510-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի գ) ենթակետի համաձայն թիվ 846-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետից հետո որոշվել է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին կետով.

«13.1. ՀԴՄ-ի կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը) նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից լրացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանով հաստատված արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) 4-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի (4 նիշ), իսկ նախորդ տարվա արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից՝ առնվազն 2-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի (2 նիշ)»:

Սակայն հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 24.12.2015 թ-ի թիվ 1510-Ն որոշման 2-րդ կետի համաձայն. «Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից»:

Վերոգրյալից հետևում է, որ Ակտի 1-ին կետում հղում է կատարվել մի իրավանորմի վրա, որը ուժի մեջ է մտնելու միայն 2016 թվականի մայիսի 1-ից:

3. Ակտի 1-ին կետում նշված է նաև, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված

կարգի 17-րդ կետի պահանջները և, որ նույն կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ՀԴՄ կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրումը 2015 թ-ի ապրիլի 1-ից 2013 թ-ի արդյունքներով 58.35 մլն դրամից մինչև 500.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում:

Տվյալ դեպքում, Ակտի 1-ին կետում հղում է կատարված ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 2-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) ենթակետի դրույթներին, որի համաձայն Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրումը 2015 թվականի ապրիլի 1-ից՝ 2013 թվականի արդյունքներով 58.35 մլն դրամից մինչև 500.0 մլն դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար:

Քննարկվող դեպքում իրականացված ստուգմամբ ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրման փաստ չի արձանագրվել: Մասնավորապես, 29.10.2015 թ-ին ժամը 13:03-ին գնված ապրանքների՝ 1 հատ սուրճ ամերիկանո 1000 դրամ, 1 հատ սուրճ արոմատացված կապուչինո 1000 դրամ, 1 շիշ ջուր 400 դրամ, դիմաց տրամադրվել է ՀԴՄ կտրոն, որի վրա տպագրված է ամերիկանո 1 բաժին 1000 դրամ, արոմատացված կապուչինո 1 բաժին 1000 դրամ, ջուր 400 դրամ: Այսիքն, ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 2-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) ենթակետի դրույթների խախտում ընկերության կողմից թույլ չի տրվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 17.11.2015 թ-ի թիվ 6115436 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ